ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿՅԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

ՍՏԵՓԱՆՅԱՆ Մ. Ս.

Առաջին աշխարհամարտի հորձանուտում հայտնված հայ ժողովրդի առջև ճակատագիրը նոր խնդիրներ և առաջնահերթություններ էր դնում: Համայն հայության առջև իրենց պարտքի և պատասխանատվության բաժինն ունեին բոլոր հայ քաղաքական կուսակցություններն ու հոսանքները:

Արևմտյան Հայաստանի ազատագրության հարցը ժողովրդի նվիրական իղձն էր: Ամբողջ աշխարհով սփռված հարյուր հազարավոր հայեր, համոզված լինելով, որ Արևմտյան Հայաստանի ազատագրումը տվյալ ժամանակ հնարավոր էր ռուսական զենքի միջոցով, մեծաքանակ խմբերով տարբեր երկրներից մեկնում էին Ռուսաստան ու որպես կամավորներ մտնում էին ռուսական բանակի շարքերը, պատրաստակամություն էին հայտնում նպաստել ռուսական բանակի հաջողություններին: Արդեն Առաջին աշխարհամարտի սկզբին հայ կամավորների թիվը ռուսական բանակում հասնում էր շուրջ երկու հարյուր հազարի[1]:

Զորավար Անդրանիկի և մյուս խիզախ հայորդիների կողքին Կովկասյան ռազմաճակատում ծավալված մարտերին գործուն մասնակցում էին նաև հնչակյանները: Հայրենիքի ազատագրության գործին զինվորագրված հնչակյան կամավորներից ձևավորվեց 6-րդ Կամավորական խումբը: Աստրախանում հնչակյանների «Էդիլ» մասնաճյուղի կազմում էին 150 կամավորներ, որոնք լեգենդար հնչակյան Հայկ Բժշկյանի (Գայի) գլխավորությամբ փառավոր մարտական ուղի անցան: Հնչակյանների Պարսկաստանի մասնաճյուղը ձևավորեց 30 հոգուց բաղկացած մի խումբ, որն այնուհետև Ա. Ռշտունու առաջնորդությամբ համալրեց Համազասպի գլխավորած 3-րդ Կամավորական խմբի շարքերը: Կուսակցության Սուխումիի կառույցը ստեղծեց կամավորուհիներից կազմված Կարմիր խաչի խումբ և 50 մարդուց կազմված զորաջոկատ, որը մարտնչում էր Կովկասյան ճակատում:

Հնչակյանների՝ Ֆրանսիայում գործող կառույցը հավաքագրեց քառասուն կամավորների, որոնք Գուրգեն Թահմազյանի առաջնորդությամբ Ֆրանսիական բանակի շարքերում՝ եվրոպական ռազմաճակատներում կռվում էին գերմանացիների և նրանց դաշնակիցների դեմ: Արևմտյան Հայաստանից Արևելյան Հայաստան գաղթած հնչակյանների մի խումբ մտավ Անդրանիկի ղեկավարությամբ մարտնչող 1-ին Կամավորական խմբի շարքերը: ԱՄՆ-ում բնակվող հնչակյաններն ակտիվորեն մասնակցեցին կամավորական շարժմանը: Կուսակցության անդամ, հետագայում նաև հնչակյան ջոկատի հրամանատար Միքայել Սերյանը (Պանդուխտը), լինելով Ամերիկայի մի շարք կուսակցական

[1] *Центральный Государственный исторический архив Москвы, ф. 2003 г., д. 546, л. 322.*

կառույցներում, ձգտում էր ամեն կերպ ոգևորել և ոտքի հանել իր կուսակից ընկերներին, որպեսզի նրանք իրենց ներդրումն ունենան կամավորական շարժման մեջ[2]:

Հնչակյանների Ռումինիայի կառույցի կողմից հավաքագրվում է 107 կամավոր, որոնց մեջ էր պատերազմի ժամանակ մարտական խիզախություններով հայտնի դարձած և հերոսաբար զոհված Անդրանիկ Երեցյանը: ԱՄՆ-ի Ռեյսին քաղաքում գործող հնչակյան կառույցի կողմից կամավորական շարժմանը ցույց տված համակողմանի օգնության վերաբերյալ կան բազմաթիվ վկայություններ[3]: Թե ինչպիսի եռանդուն գործունեություն է ծավալել Պանդուխտը Ամերիկայում կամավորներ հավաքագրելու ժամանակ, վկայում է նրա նամակը՝ գրված 1914 թ. դեկտեմբերի 1-ին, ուղղված Ներսես Փիլիկյանին, որն ունի ճանաչողական արժեք[4]:

Ակտիվորեն մասնակցելով կամավորական շարժմանը՝ Պանդուխտը գլխավորում է ամերիկահայ կամավորների առաջին խումբը, որը 1915 թ. մարտի 12-ին հասնում է Կովկաս[5]: Գլխավորելով ամերիկյան Քերվիլ քաղաքի հնչակյան մասնաճյուղի անդամներից կազմված 28 կամավորներին՝ Պանդուխտն ակտիվ գործողություններ է ծավալում Կովկասյան ռազմաճակատում:

Հարկ է նշել, որ Թիֆլիսը դարձել էր կամավորների հավաքագրման և կազմակերպման հիմնական դարբնոցը: Հնչակյանների բոլոր կառույցներն իրենց ամբողջ եռանդով ու նվիրումով ջանք չէին խնայում կամավորական շարժմանը զորակցելու գործում:

Այդ հարցերն էր շոշափում 1915 թ. Թիֆլիսում կայացած հնչակյանների միջշրջանային ժողովը, աշխատանքներին է անդրադարձել Ս. Սապահ-Գուլյանը 1915 թ. հուլիսի 17-ին Կահիրեից ուղարկած իր նամակի մեջ[6]:

Կամավորական շարժմանը հատկապես ակտիվորեն օժանդակեցին Բուլղարիայում գործող հնչակյան կառույցները: Բուլղարահայ բազմաթիվ կամավորներ անցան Բուխարեստ (Ռումինիա), որտեղից էլ դարձյալ հնչակյան կառույցների նյութական օժանդակությամբ ճանապարհվեցին Կովկաս:

Կամավորական շարժմանը մեծ եռանդով զորավիգ եղավ ռումինահայությունը: Տեսնելով Ռուսաստանին և նրա դաշնակիցներին ամեն կերպ զորավիգ լինելու ռումինահայության պատրաստակամությունը՝ Ռումինիայում Ռուսաստանի դեսպանն աջակցեց և արտոնություն շնորհեց հնչակյաններին՝ կամավորական խմբեր կազմելու և Կովկասյան ռազմաճակատ ուղարկելու համար: 1915 թ. սկզբների տվյալներով, միայն Ռումինիայից և Բուլղարիայից Կովկաս ուղարկված կամավորների թվաքանակը հասնում էր մոտավորապես 850-ի[7]: Թիֆլիսում գործող ՍԴՀԿ կամավորների խնդիրներով

---

[2] Տե՝ս **Ճէրէճեան Ե.**, Պանդուխտ, Պէյրութ, 1999, էջ 13-14:

[3] Պատմութիւն Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան, 1887-1963, հ. Բ, Պեյրութ, 1963, էջ 38:

[4] Հայաստանի Ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 408, ց. 1, գ. 32, թ. 1-2:

[5] **Կարապետյան Մ.,** Հայկական կամավորական խմբերը և ազգային գումարտակները Կովկասյան ռազմաճակատում (1914-1917թթ.), Ե., 1999, էջ 40:

[6] Ս. Դ. Հնչ. Ընկերներու դատաստանին, Պոսթոն, 1920, էջ 242:

[7] Տե՛ս Երիտասարդ Հայաստան, Փրավիտենս (ԱՄՆ), 2. III. 1915:

զբաղվող Գործադիր մարմինը գլխավորում էր նվիրյալ հնչակյան Հարություն Գասպարյանը (Արտեմիսը): Նրա հսկողությամբ հավաքված հնչակյան կամավորներն անցնում էին զինավարժությունների ու մարզումների կարճատև փորձաշրջան, որից հետո խումբ-խումբ առաքվում էին ռազմաճակատ:

Դեռևս 1912 թ. ԱՄՆ-ի Չիկագո քաղաքում Պանդուխտի ոգևորիչ ելույթի շնորհիվ այստեղ գործող հնչակյան կուսակցական մասնաճյուղի շարքերը համալրվում են բազմաթիվ անդամներով: Այդ գործընթացը նպաստում է նաև Չիկագոյի հայ գաղութի պատմության մեջ առաջին անգամ ակումբ-գրադարանի բացմանը և հնչակյան դերասանախմբի ստեղծմանը[8]: Պանդուխտը այցելում է ԱՄՆ-ի Քլիվլենդ քաղաքի հնչակյան մասնաճյուղ, որտեղ «կը սարքուի հրապարակային լուսաբանակ ժողով, գաղութի հայութիւնը կը փութայ մտիկ ընելու հնչակյան գործիչը»[9]: Կուսակցական գործերի բերումով Պանդուխտն այցելում և կազմակերպական եռանդ է հաղորդում կանադական Կոլթի, Բրենդֆորդ, Սենթ-Քիթիրենս քաղաքների հնչակյան մասնաճյուղերին: Նա ԱՄՆ-ում մեծ հարգանք և համակրանք ուներ:

Թիֆլիսում ձևավորված Հայոց ազգային բյուրոն իր ձեռքին էր կենտրոնացրել կամավորական շարժման ղեկավարումն ու դրա կազմակերպման աշխատանքը: Բյուրոյում գլխավորապես եղանակ էին ստեղծում դաշնակցական գործիչները: Այս հանգամանքը որոշակի դժգոհություն էր առաջացնում հայ հասարակայնության շրջանում: 1916 թ. մարտին ռամկավարների, վերակազմյալ հնչակյանների և ՍԴ հնչակյանների ներկայացուցիչները ստեղծում են մի պատվիրակություն, որը հանդիպում է Հայոց ազգային բյուրոյի ներկայացուցիչների հետ: ՍԴՀԿ–ի կողմից այդ հանդիպմանը մասնակցում էր Հակոբ Ղազարյանը (Լազո): Պատվիրակներն առաջարկում են, որ ազգային բյուրոյի ղեկավար մարմիններում տեղեր ունենան ոչ միայն դաշնակցականները, այլև բոլոր կուսակցությունները և այդ ժամանակ հայ հասարակայնության շրջանում մեծ ժողովրդականություն վայելող «Գաղափար», «Մշակ», «Վան-Տոսպ», «Հորիզոն» թերթերի ներկայացուցիչները: Այդ առաջարկությունը չի ընդունվում: Հնչակյանների Թիֆլիսի գործադիր մարմնի անունից Բագրատ Սյունիքը այցելում է ազգային բյուրո: Նա մատնանշում է, որ կամավորական շարժման ղեկավարման մեջ առկա է կուսակցական խտրականություն: Սյունիքն, անշուշտ, ակնարկում էր ազգային բյուրոյի ղեկը հիմնականում իր ձեռքին կենտրոնացրած ՀՅԴ-ի վարած քաղաքականությունը: Նա տեղեկացնում է, որ ՍԴՀԿ –ն վճռել է իր ուժերով և իր անդամներով ձևավորել 6-րդ Կամավորական գունդը և պահանջ է ներկայացնում Հայոց ազգային բյուրոյին, որ նա արտասահմանից ստացված միջոցների որոշ մասը տրամադրի այդ գնդի ստեղծմանը: Պնդելով, որ իրենք իրավասու չեն ֆինանսավորել կուսակցական նախաձեռնություններ, Հայոց

[8] Տե՛ս Պատմութիւն Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան, 1887-1963, հ. Բ, էջ 33-34:
[9] Տե՛ս Ճէրէճեան Ե., նշվ. աշխ., էջ 12:

ազգային բյուրոն մերժում է այդ առաջարկությունը: Սակայն հնչակյանները չեն հուսահատվում: 6-րդ գունդը ձևավորվում է միայն հնչակյանների հավաքած միջոցներով: Այդ պատճառով էլ այն իրավացիորեն կարելի է կոչել Հնչակյան 6-րդ գունդ: Հնչակյան կամավորների պատասխանատու Արտեմիսի օգնականներն էին Սարգիս Սարգսյանը (Մաթևոս Սարգսյանի (Փարամազ) եղբայրը) և Հաջի Նազիքը, որոնք հնչակյան կամավորներին փոքրաթիվ խմբերով ուղարկում էին ռազմաճակատ: 1915-ին Ամերիկայից Թիֆլիս են գալիս մոտավորապես 350 կամավոր, որոնք Պանդուխտի գլխավորությամբ մեկնում են Կարս և սկսում են զբաղվել զինավարժություններով: Երբ Հովհաննես Ջանփոլադյանի ղեկավարությամբ ստեղծվում է Հնչակյան 6–րդ գունդը, Պանդուխտն իր ջոկատի հետ միասին մտնում է այդ զորամիավորման մեջ: Այդ է վկայում Էջմիածնի կաթողիկոսարանի դիվանապետ Բագրատ եպիսկոպոս Վարդազարյանին ՍԴՀԿ Կովկասի և Ռուսաստանի լիազոր ներկայացուցիչ Բ. Սյունիքի ուղղած նամակը՝ գրված 1915 թ. մարտի 13–ին: Սյունիքը պահանջում էր կուսակցությանը տրամադրել հնչակյան կամավորների համար ուղարկված «Ամերիկայի ազգային պաշտպանության հանձնախմբի» 1500 դոլարը: Նա գրում էր նաև հետևյալը. «Կարևոր եմ համարում յայտնել ձեզ, որ հնչակեան հազար կամաւորներից բաղկացած 6–րդ Հայկական կամաւորական տրուժինայի հրամանատարն է ռուս բանակի սպայ հայազգի Յովհաննէս Ջանփոլատեանը, որի օգնականն է Ամերիկայից եկած գործիչ Մ. Պանդուխտը, որոնք ճանչցուած եւ հաստատուած են ինչպէս ռուսական սպայակոյտի, նոյնպէս եւ կուսակցութեան կողմից»[10]: 6–րդ գնդի զինվորներից մեկը՝ Արամ Չորպաճյանը, իր հուշերում գրել է. «Երբ Ամերիկայի կամաւորական խումբը Զ. գունդ կոչուեցաւ, այդ օրերուն մեր գնդապետը ընկ. Պանդուխտն էր: Հետագային, ինձի անծանօթ պատճառներով, ուրիշ հրամանատարներու միջոցով սկսանք մարզուիլ: Պանդուխտը շատ սիրուած եւ կորովի գնդապետ էր»[11]: 6–րդ գնդի կազմի թվաքանակի վերաբերյալ ճշգրիտ տեղեկություններ չեն պահպանվել: Ա. Կիտուրը գրում է, որ գունդը բաղկացած էր 1500 կամավորներից[12]: Այս առումով մեկ այլ տվյալ կա 1915 թ. մայիսի 13–ին կաթողիկոսի դիվանին «Մշակի» խմբագիր Համբարձում Առաքելյանի ուղղած նամակում: Նրանում նշված է, որ Հնչակյան 6–րդ գնդի մեջ կան ոչ միայն հնչակյաններ, այլև ոչ կուսակցական կամավորներ[13]: Զարմանք է առաջացնում 6–րդ գնդի նկատմամբ Ս. Վրացյանի վերաբերմունքը: Նա 1915 թ. դեկտեմբերի 20–ին ԱՄՆ-ի իր բարեկամներին ուղղած նամակի մեջ գրում էր, որ 6–րդ գնդում

[10] ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 104, թ. 1-2:
[11] Նույն տեղում:
[12] Պատմութիին Ս. Դ. հնչակեան կուսակցութեան, 1887-1963, հ. Ա, Պեյրութ, 1963, էջ 472:
[13] ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ.20, թ. 26-27:

խառնաշփոթ վիճակ է տիրում[14]: Այնուհետև նա գրում է. «Պանդուխտն իր մարդոց հետ հեռացուցած են եւ նորէն կանչած են Ջանփոլատեանը»[15]: Փաստերը վկայում են, որ Պանդուխտը երբեք չի հեռացել իր գնդից: Խնդրո հարցի վերաբերյալ միանգամայն հստակ արտահայտվել է ակադեմիկոս Հ. Սիմոնյանը: Նա գրում է. «Հնչակյան կուսակցության ղեկավարությամբ կազմվեցին մի շարք խմբեր: Հատկապես բազմամարդ էր Գրիգոր Ավշարյանի (Ավշարով) հրամանատարությամբ ստեղծված Հնչակյան 6–րդ գունդը: Հնչակյաններից կազմ-ված կարևոր զորամասերից էր նաև 350 հոգուց բաղկացած Պանդուխտի (Միքայել Սերյան) խումբը, որը հետագայում միացավ 6–րդ գնդին»[16]:

Կամավորական շարժմանն ու հայ ժողովրդի ազատագրության գաղափարին ամբողջ էությամբ նվիրված էր Հայկ Բժշկյանը (Գայ): Հատկանշական է, որ նա 17 տարեկանում արդեն հնչակյան էր, իսկ 1918 թ. մտնում է կոմունիստական կուսակցության շարքերը: Առաջին աշխարհամարտի ժամանակ, 1914 թ. վերջին, նա ներգրավվել է հայկական կամավորական շարժման մեջ: Սկզբում եղել է հեծյալ վաշտի, իսկ այնուհետև 6–րդ կամավորական խմբի հրամանատարը: Ակտիվորեն մասնակցել է Էրզրումի, Մուշի և Խլաթի ազատագրման մարտերին: Հայկ Բժշկյանը 1916 թ. հնչակյան «Գաղափար» թերթում հրապարակված «Կարին», «Դեպի Էրզրում», «Նամակներ Էրզրումից» վկայություններում պատկերել է արևմտահայության մեծագույն ողբերգությունը՝ XX դարի առաջին ցեղասպանությունը: Նա հավաստի փաստերով ցույց է տվել երիտթուրքական իշխանությունների հայասպան քաղաքականությունն ու գործողությունները: 1915 թ. իր բարեկամ Մելքոնին ռազմաճակատից ուղարկած նամակում Հ. Բժշկյանը պատկերավոր տողերով ներկայացրել է հնչակյանների ռազմական պատրաստության առօրյան Ղարսում[17]:

Պատերազմի ընթացքում Հնչակյան 6–րդ գունդը 1915 թ. գարնանը Ալեքսանդրապոլից մեկնում է Կարս: Այնտեղ Առաքելոց եկեղեցում տեղի է ունենում գնդի երդման արարողությունը: Որոշ ժամանակ անց գունդը Կարսից Բասենի դաշտով ուղևորվում է Էրզրում: Ղարաղութ, Բաշ, Չըլըգան գյուղերը անցնելուց հետո գունդը 1915 թ. ապրիլին առաջին անգամ մարտի մեջ է մտնում թուրքական ուժերի դեմ: Դրանից հետո գնդին սպասում էին բազմաթիվ դաժան և անզիջում մարտեր: Գնդի համար հատկապես շատ դաժան բնույթ կրեցին Բռնաշենի, Տեկերի, Քեռքդաղի, Զորագյուղի, Էսմերի, Բռնակապանի, Վաթոքի, Թութախի, Հյոպեքդաղի, Բագառիճի, Մամախաթունի, Այգեպայի մարտերը[18]:

---

[14] **Ճէրէճեան Ե.,** նշվ. աշխ., էջ 20:

[15] Ս. Վրացյանի նամակը ընկնում է ցարական գաղտնի ծառայության ձեռքը: Ներկայում այն պահվում է Մոսկվայի Կենտրոնական պետական ռազմապատմական արխիվում (ֆ. 2100, ց. 1, գ. 646, թ. 11-13):

[16] **Սիմոնյան Հր.**, Անդրանիկի ժամանակը, գ. Ա, Ե., 1996, էջ 388:

[17] ՀԱԱ, ֆ. 4045, ց. 1, գ. 179, թ. 99-100:

[18] Տե՛ս **Ճէրէճեան Ե.,** նշվ. աշխ., էջ 22-23:

Հ. Բժշկյանը հետևյալ կերպ է պատկերել 1915թ. հունիսի 22–ին Վերին Բասենի հովտում թուրք–քրդական զինված ուժերի դեմ տեղի ունեցած մարտը. «Համիդյան հեծյալների հինգ հարյուրյակ Գզլդաղ Սարի ստորոտից հանկարծակի սլացան մեզ վրա: Քառատրոփ արշավով նրանք շրջանցեցին մեր թևը: Դրությունն ավելի բարդացավ: Մեկ ելք կար՝ նահանջել: Բայց այստեղ ծխի և փոշու քուլաների մեջ մենք տեսանք Ավշարյանին: Մեկ շղթայից մյուսը վազելով, նա հանգստացնում և քաջալերում էր զինվորներին: Եվ նրանք շարունակում էին կրակել, չնայած ծխի ու փոշու մեջ ոչինչ չէին տեսնում: Ավշարյանը տեղից տեղ վազելով հրամաններ էր արձակում, գոռում էր, հորդորում, ձեռքով ցույց էր տալիս թշնամու հեծյալների կողմը և կրկնում, «Փախչո՛ւմ են, փախչո՛ւմ, սիրելիներս, խփեցե՛ք նրանց: Դե, մեկ էլ տեսեք, արդեն փախան»[19]: Հետաքրքիր են նաև Հ. Բժշկյանի ու Գ. Ավշարյանի երկխոսությունը և կռվի պատկերը[20]:

Ուշագրավ է նաև Հ. Բժշկյանի կողմից մեկ ուրիշ մարտի նկարագրությունը՝ իր և նույն Գ. Ավշարյանի մասնակցությամբ, հայ զինվորների անձնազոհ կռվի մասին[21]:

6–րդ գունդը սարսափելի ծանր մարտեր էր մղում 1915թ. հունիսի 22-ին: Շարյան գետի ափերին մոտ տեղի ունեցած մարտի ժամանակ հերոսի մահով ընկավ խմբի անձնազոհ հրամանատար Գ. Ավշարյանը: Դրանից հետո խմբի հրամանատարի պաշտոնը ստանձնեց Հ. Բժշկյանը:

Շուտով գունդը ռուսական զորքերի տրամադրության տակ է թողնում իր ազատագրած տարածքները և վերակազմավորման ու հանգստի նպատակով կարճատև դադար առնում: Ապա գնդի մարտիկները նոր եռանդով ու պատվախնդրությամբ վերսկսում են մարտական գործողությունները՝ ազատագրելով Դալեկ, Ալպեղա, Չադ, Ճանպախ բնակավայրերը: Գնդի փայլուն, վճռական գործողությունների շնորհիվ Ալաշկերտի հովտի մեծ մասը և Բասենի ամբողջ դաշտը ազատագրվում են թուրքերից:

Դրանից հետո որոշ ժամանակ ռազմաճակատում հաջողությունը ուղեկցում է թուրքերին: Նրանք հակահարձակման անցնելով՝ նոյեմբերի 10–ին գրավում են Քյոփրի – քյոյ բնակավայրը:

Թուրքական 11–րդ բանակը համալրվելով՝ կասեցնում է հայկական և ռուսական զորքերի առաջխաղացումները և հասնում որոշակի հաջողությունների: Սակայն այս հանգամանքն ամենևին էլ չի կոտրում հայկական և ռուսական ուժերի մարտական ոգին: Կովկասյան ճակատում ռուսական բանակի իրականացրած երկրորդ կարևորագույն ռազմական գործողությունը Էրզրումի գործողությունն էր: Ինչպես հայտնի է, առաջինը Սարիղամիշի գործողությունն էր: Չդիմանալով ռուսական բանակի՝ 1915 թ. դեկտեմբերի 24–ից մինչև 1916 թ. հունվարի 6–ը տևած հզոր հակահարձակմանը՝ թուրքական բանակը նահանջում է դեպի Էրզրում:

---

[19] **Հայրապետյան Հ.**, Լեգենդար Գայ, Ե., 1977, էջ 26:

[20] Նույն տեղում , էջ 26-27:

[21] Յուշարձան նուիրված Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան քառասնամեակին, Փարիզ, 1930, էջ 277:

Միայն այդ գործողության ընթացքում թուրքական բանակի սպանվածների թիվը հասնում է մոտավորապես 66 հազարի[22]: Ռուսական բանակի այդ դժվարին և փառահեղ հաղթանակի մեջ իրենց կարևոր ներդրումն ունեցան նաև 6–րդ խմբի մարտիկները: Խումբը, հետապնդելով նահանջող թուրքական զորքերին, 1916 թ. փետրվար–մարտին նրանց դուրս է մղում Էրզրումի շրջակայքում գտնվող դիրքերից և «Կարսի դուռ» կոչված վայրից հաղթականորեն մտնում է Էրզրում: Հ. Բժշկյանը հետևյալ կերպ է ներկայացրել այդ պատմական իրադարձությունը. «Ռուս զորքը, որի հետ նաև մեր անձնազոհ կամավորական խմբերը, գերմարդկային ճիգեր թափելով՝ մի ձեռքով կռվելով, մյուսով՝ ճանապարհ շինելով, հարյուրավոր թնդանոթներ իրենց ուսերի վրա ձյունապատ լեռները բարձրացնելով միմյանց հետևից, բուք ու բորանի մեջ գրավեցին այնպիսի ամրություններ, ինչպիսիք են Դևեբոյունի բարձունքները, Փալան-թոքանի ամրոցները և Կարինի անառիկ բերդը: Հեշտ է այս մասին միայն ասել …»[23]:

Ոգևորված Էրզրումի ազատագրումով՝ խումբը շարունակում է իր վստահ գործողությունները: Խմբի հաջորդ փորձությունը Մամախաթունի մոտ տեղի ունեցած մարտերն էին: Դրանից առաջ, մարտի ժամանակ երրորդ անգամ վիրավորվելով՝ Հ. Բժշկյանը բուժման համար հիվանդանոց է ուղարկվում, և խմբի հրամանատարությունը ստանձնում է Պանդուխտը: Հնչակյան 6–րդ խմբի ամենածանր և կատաղի մարտերը տեղի ունեցան 1915 թ. հունիսի 20–29-ին: Այդ արյունահեղ կռիվներում հնչակյան խումբը թշնամուց գրավեց ռազմավարական խիստ կարևոր նշանակություն ունեցող Չախմախլը լեռը: Այս հաղթանակը ծանր գնով ձեռք բերվեց: Զոհվեցին, վիրավորվեցին և անհայտ կորան հարյուրից ավելի կամավորներ: Հայկական կամավորական խմբերի անձնակազմի մասին ամփոփ թվեր չկան: Բերվում են տարբեր թվեր: Հայոց ազգային բյուրոյի՝ 1914 թ. դեկտեմբերի 28–ի նիստում խնդիր դրվեց կամավորների թիվը հասցնել 6000 հոգու[24]: Փոխարքա Վորոնցով- Դաշկովին 1915 թ. հոկտեմբերին ուղված զեկուցագրում Մեսրոպ արքեպիսկոպոսը, Ս. Հարությունյանը և Ա. Խատիսյանը հայտնում էին, որ կազմակերպված է 6 խումբ՝ 5000 հոգանոց անձնակազմով[25]: Ինչպես 6–րդ խումբը, այնպես էլ բոլոր կամավորական խմբերը մեծ ներդրում ունեցան պատերազմի առաջին շրջանում տարած ռուսական հաղթանակների մեջ: Կամավորները ոչ միայն իրենց ծանրակշիռ մասնակցությունն ունեցան Ռևանդուզի, Սարիղամիշի, Դիլմանի, Էրզրումի մարտերին, այլև զգալի դեր խաղացին Էրզրումի, Բերկրի– Կալայի, Բիթլիսի, Վանի, Խնուսի ազատագրման գործում, մեծ ծավալի աշխատանք կատարեցին արևմտահայերի կյանքը փրկելու, ազատագրված տարածքներում բնականոն կյանքը վերականգնելու և հայ օջախի

[22] Տե՛ս **Ճէրէճեան Ե.,** նշվ. աշխ., էջ 26:

[23] **Աղայան Ծ.,** Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից, Ե., 1976, էջ 442: Գաղափար, 1916, N 11:

[24] **Կարապետյան Մ.,** նշվ. աշխ., էջ 41:

[25] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 288, ց.1, գ. 3, թ.7:

ծուխը ծխացնելու գործում: Ռուսաստանի Պետական դումայի պատգամավոր Սիրական Տիգրանյանի նախաձեռնությամբ գեներալ Օգանովսկու գլխավորած 4–րդ բանակային կորպուսի շտաբին առընթեր հիմնվեց թուրքերից ազատագրված Ալաշկերտ-Բայազետի շրջանի Հայկական վարչական մարմին[26]: Վանի ազատագրումից հետո գեներալ Նիկոլաևի հրամանով Արամ Մանուկյանը նշանակվեց Վանի նահանգապետ:

Ազատագրված շրջաններում բնակչության սոցիալ–տնտեսական վիճակը կարգավորելու նպատակով ռուս բարձրաստիճան զինվորականներն աջակցում էին այդ բնակավայրերում ձևավորված Հայկական կոմիտեների ծավալած գործունեությանը: Դա օրինաչափ մոտեցում էր, քանի որ կամավորների խիզախությունն ու անձնազոհությունը միշտ էլ արժանացել էին ռուսական կառավարության բարձր գնահատականին: Հայ կամավորական խմբերի բազմաթիվ մարտիկներ պարգևատրվել էին շքանշաններով ու մեդալներով[27]:

Ցավոք, կամավորների նվիրվածությունն ու խիզախությունը ոչ միշտ էր ստանում արժանի գնահատական: Որոշ ռուս իշխանավորների մեջ բացասական վերաբերմունք էր ձևավորվել կամավորական շարժման նկատմամբ: Անհիմն մեղադրանքներ էին հորինվում, որոնք կասկածի տակ էին դնում ռուսական պետության նկատմամբ հայերի նվիրվածությունը[28]: Ամենայն հավանականությամբ, ռուսական որոշ կառավարող շրջաններ մտավախություն ունեին, որ կամավորական խմբերը, հաղթանակների մեջ թափ առնելով ու հզորանալով, կարող էին դուրս գալ ռուսական պետության վերահսկողությունից և դառնալ հայոց ազգային բանակի հիմքը:

1915 թ. վերջերին ռուսական կառավարությունն էլ ավելի հզորացրեց կովկասյան բանակը: Դա կառավարության համար կամավորական խմբերը լուծարելու հարմար առիթ էր: Եվ 1916 թ. մարտին ռուսական հրամանատարությունը որոշում ընդունեց հայկական կամավորական խմբերի լուծարման վերաբերյալ: Դրանց փոխարեն, ռուսական գլխավոր հրամանատարությունը մինչև նույն տարվա հունիս ամիսը ձևավորեց հայ սպաների հրամանատարությամբ գործող 6 կանոնավոր հայկական գումարտակներ: Մեր կարծիքով, դա չի կարելի ռուսական իշխանությունների կողմից հակահայկական տրամադրությունների դրսևորում համարել: Ընդհակառակը, կովկասյան կանոնավոր բանակի կազմում 6 հայկական գումարտակներ ձևավորելու որոշումը պետք է համարել ռուսական հրամանատարության կողմից հայ ռազմական բարձր ոգու և նվիրվածության արժանի գնահատական:

Սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցությունը ձգտում էր կամավորական շարժումը զերծ պահել նեղ կուսակցական քարոզչությունից և խտրականությունից՝ համոզված, որ այն պետք է կրի վերկուսակցական, համազգային բնույթ: Աշխարհի մի շարք երկրներում կամավորական շարժման ծավալման ու հզորացման

---

[26] Տե՛ս **Գեոյեանց Տ.,** Հետախոյզի մը յուշերը, Փարիզ, 1938, էջ 51:

[27] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 121, ց. 3, գ. 16, թ. 3:

[28] **Կարապետյան Մ.,** նշվ. աշխ., էջ 91:

ուղղությամբ Հնչակյան կուսակցության եռանդուն և հետևողական աշխատանքները պսակվեցին լուրջ հաջողություններով:

Առանց կասկածի, հարկ է նշել, որ կամավորական շարժման և բոլոր ինքնապաշտպանական հերոսամարտերի շնորհիվ տասնյակ ու հարյուր հազարավոր հայեր փրկվեցին եղեռնից և ապաստան գտան ոչ միայն Արևելյան Հայաստանում, այլ նաև աշխարհի մի շարք երկրներում:

Հանրագումարի բերելով հնչակյանների մասնակցությունը հայ կամավորական շարժմանը՝ տրամաբանական է պատմագիտական հետևությունը, ըստ որի, հնչակյան կուսակցությունը լիովին հաստատում էր այն ճշմարտությունը, որ այդ ժամանակ միայն հայության միասնական ու զինված պայքարով էր հնարավոր Արևմտյան Հայաստանի ազատագրությունը: Միանգամայն ճշմարիտ էր նաև հնչակյան կուսակցության այն կողմնորոշումը, որ Ռուսաստանի ռազմաքաղաքական աջակցությունը կարևոր պայման է Հայկական հարցի արդարացի լուծման համար:

ДОБРОВОЛЬЧЕСКОЕ ДВИЖЕНИЕ И СОЦИАЛ-ДЕМОКРАТИЧЕСКАЯ ГНЧАКИСТСКАЯ ПАРТИЯ

СТЕПАНЯН М. С.

Резюме

В период первой мировой войны, наряду с полководцем Андраником и другими отважными сынами армянского народа на Кавказском фронте в составе русской армии самоотверженно сражались добровольцы гнчакисты. Они активно участвовали в героической самообороне горы Муса, Фынтычага и т. д. Шестой гнчакистский отряд армянского добровольческого движения прошел героический путь борьбы за освобождение Западной Армении. Командовали отрядом сначала А. Джанполадян,затем его сменил Г. Авшарян,а после его гибели командиром стал легендарный Г. Бжшкян (Гай).

Армянское освободительное движение, в частности добровольческое движение, сыграло важную роль в спасении многих тысяч армян от геноцида.